

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Դաբաղ հիվանդության վերահսկումների մասին եվրոպական հանձնաժողովի կանոնադրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

ԸՆԴՈՒՆՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆՄՈՒՇ

Ամսաթիվ՝

Հարգելի՛ պարոն,

Պատիվ ունեմ վկայակոչելու Դարադ հիվանդության վերահսկումների մասին Եվրոպական հանձնաժողովի կանոնադրությունը, որը փոփոխվել է ՊԳԿ խորհրդի 2015 թվականի հարյուր հիսուներեքերորդ նիստին, եւ տեղեկացնելու, որ **[երկրի անվանումը]**-ի կառավարությունը սույնով ընդունում է վերոնշյալ Կանոնադրությունը եւ պարտավորվում է հետեւել վերջինիս դրույթներին:

Խնդրում ենք դիտարկել այս նամակը որպես Կանոնադրության XV հոդվածի 1-ին պարբերության մեջ հիշատակված ընդունման փաստաթուղթ:

Հարգելի՛ պարոն, խնդրում եմ ընդունել խորին հարգանքիս հավաստիքը:

[Ստորագրություն հետեւյալ մարմիններից որեւէ մեկի կողմից]

- Պետության ղեկավար կամ

- Կառավարության ղեկավար կամ

- Արտաքին գործերի նախարարություն կամ

- Համապատասխան գերատեսչության նախարար

[ԿՆԻՔ]

Գլխավոր տնօրեն՝

Միավորված ազգերի կազմակերպության պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպություն

Վիա Դելլե Տերմե դի Կարակալա

00100 Հռոմ

Իտալիա

ԸՆԴՈՒՆՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆՄՈՒՇ [ՄԱՍՆԱՎՈՐ]

[Երկրի անվանումը]-ի կառավարությունը պատիվ ունի վկայակոչելու Դարադ հիվանդության վերահսկումների մասին Եվրոպական հանձնաժողովի կանոնադրությունը, որը փոփոխվել է ՊԳԿ խորհրդի հարյուր եւ հարյուր հիսուներեքերորդ նիստերին, եւ տեղեկացնելու Միավորված ազգերի կազմակերպության պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության գլխավոր տնօրենին, որ [Երկրի անվանումը]-ը սույնով ընդունում է վերոնշյալ Կանոնադրությունը՝ համաձայն XV հոդվածի 1-ին պարբերության, եւ պարտավորվում է հետեւել վերջինիս դրույթներին:

Ամսաթիվ՝

[Ստորագրություն հետեւյալ մարմիններից որեւէ մեկի կողմից]

- Պետության ղեկավար կամ
- Կառավարության ղեկավար կամ
- Արտաքին գործերի նախարար կամ
- Համապատասխան գերատեսչության նախարար

[ԿՆԻՔ]

ԴԱԲԱՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովի կողմից իր՝ քսաներկուերորդ, քսանութերորդ, երեսուներկուերորդ եւ քառասունմեկերորդ նիստերին, համապատասխանաբար՝ 1977թ., 1989թ., 1997թ. եւ 2015թ. փոփոխված, եւ ՊԳԿ-ի խորհրդի կողմից իր՝ յոթանասուներկուերորդ, իննսունվեցերորդ, հարյուր տասներեքերորդ եւ հարյուր հիսուներեքերորդ նիստերին, համապատասխանաբար՝ 1977թ., 1989թ., 1997թ. եւ 2015թ. հաստատված խմբագրությամբ

ՆԱԽԱԲԱՆ

Պայմանավորվող կառավարությունները, հաշվի առնելով դաբաղ հիվանդության կրկնվող բռնկումներով պայմանավորված՝ եվրոպական գյուղատնտեսությանը հասցվող ծանր կորուստների կրկնվող դրսեւորումները կանխարգելելու ծայրահեղ անհրաժեշտությունը, սույնով հիմնադրում են Հանձնաժողով՝ ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության շրջանակներում, որը կանվանվի Դաբաղ հիվանդության վերահսկումների մասին եվրոպական հանձնաժողով, որի նպատակն է Եվրոպայում դաբաղ հիվանդության դեմ կանխարգելիչ եւ վերահսկիչ միջոցառումների մասով խթանել ազգային եւ միջազգային գործողությունները:

ՀՈԴՎԱԾ I

Անդամությունը

Անդամությունը Դաբաղ հիվանդության վերահսկումների մասին եվրոպական հանձնաժողովում (այսուհետ՝ Հանձնաժողով) բաց կլինի ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության այնպիսի եվրոպական անդամ երկրների՝ ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության շրջանակներում անցկացվող Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի

տարածաշրջանային համաժողովում որպես անդամ մասնակցող եւ ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության՝ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի կողմից սպասարկվող պետությունների, ինչպես նաեւ ՄԱԿ-ի անդամ երկիր համարվող՝ Անասնահամաճարակային հարցերով կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության այնպիսի Եվրոպական անդամ երկրների համար, որոնք ընդունում են սույն կանոնադրությունը՝ XV հոդվածի դրույթների համաձայն: Հանձնաժողովը կարող է Հանձնաժողովի անդամների երկու երրորդի մեծամասնությամբ անդամություն շնորհել այնպիսի եվրոպական այլ պետությունների, որոնք Միավորված ազգերի կազմակերպության կամ դրա որեւէ մասնազիտացված գործակալության կամ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անդամ են եւ ներկայացրել են անդամության հայտ ու պաշտոնական փաստաթղթով ամրագրված հայտարարություն՝ սույն կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունների ստանձնման վերաբերյալ, որն ուժի մեջ է եղել նրանց ընդունման պահին:

2. ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպությունը (այսուհետ՝ ԿԱՀԿ), Եվրոպական միությունը, ինչպես նաեւ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպությունն իրավասու կլինեն ներկայացված լինելու Հանձնաժողովի եւ վերջինիս կոմիտեների բոլոր նիստերին, սակայն նրանց ներկայացուցիչները չեն ունենա քվեարկելու իրավունք:

ՀՈՐՎԱԾ II

Անդամների պարտավորությունները դաբաղ հիվանդության վերահսկման ազգային քաղաքականության եւ միջազգային համագործակցության մասով

1. Անդամները պարտավորվում են վերահսկել դաբաղ հիվանդությունը՝ նպատակ ունենալով վերջնականապես վերացնել այն համապատասխան կարանտինային եւ սանիտարական միջոցների նախաձեռնման եւ հետեւյալ մեկ կամ ավելի մեթոդների կիրառման միջոցով.

1) սպանդի քաղաքականություն,

2) սպանդ՝ պատվաստման հետ միասին,

3) հիվանդությունների դեմ լիովին անընկալունակ ընտանի խոշոր եղջերավոր անասունների պահպանում պատվաստման միջոցով. այլ դյուրընկալ անասուններ կարող են պատվաստվել,

4) պատվաստումներ բռնկումներին հարող տարածքներում,

Ընդունված մեթոդները պետք է անշեղորեն իրականացվեն: Այն անդամները, որոնք ԿԱՀԿ-ի կողմից չեն ճանաչվել որպես «դաբաղ հիվանդությունից զերծ» կարգավիճակ ունեցող երկրներ, բացառությամբ այն դեպքերի, երբ կարգավիճակը ժամանակավորապես կասեցվել է, պետք է ունենան հիվանդության աստիճանական վերահսկման ազգային ծրագիր:

2. Անդամները պետք է ունենան դաբաղ հիվանդության ներթափանցումների անհապաղ կառավարման համար նախատեսված արտակարգ իրավիճակների պլան եւ ապահովեն ֆինանսական, մարդկային եւ տեխնիկական ռեսուրսների բավականաչափ հասանելիություն՝ II հոդվածում նշված վերահսկման մեթոդների անհապաղ կիրառման համար (1):

3. 2-րդ եւ 4-րդ քաղաքականության ուղղությունները որդեգրող

անդամները հանձնառում են իրենց տնօրինման տակ ունենալ պատվաստանյութերի կամ պատվաստանյութ մշակելու հակամարմինների պաշար, որը բավարար կլինի հիվանդության դեմ պատշաճ պաշտպանություն ապահովելու համար, եթե հիվանդության տարածումը չի կարող վերահսկվել բացառապես սանիտարական միջոցներով: Յուրաքանչյուր անդամ պետք է համագործակցի եւ բոլոր համաձայնեցված միջոցներով աջակցի մյուս անդամներին դաբաղ հիվանդության վերահսկման, մասնավորապես՝ ըստ անհրաժեշտության պատվաստանյութերի կամ պատվաստանյութ մշակելու հակամարմինների պաշարների հարցում: Ազգային եւ միջազգային կիրառման համար հակամարմինների եւ պատվաստանյութի քանակը սահմանվում է անդամների կողմից՝ Հանձնաժողովի եզրահանգումների ու ԿԱՀԿ-ի խորհրդատվության լույսի ներքո:

4. Անդամները պետք է սահմանեն նման կարգավորումներ՝ դաբաղ հիվանդության բռնկումներից առաջացող վարակի տեսակավորման համար, Հանձնաժողովի կողմից պահանջվող կարգով, եւ անմիջապես ծանուցեն Հանձնաժողովին եւ ԿԱՀԿ-ին նմանատիպ տեսակավորման արդյունքների վերաբերյալ:

5. Անդամները պետք է սահմանեն կարգավորումներ՝ ՊԳԿ-ի կողմից սահմանված Համաշխարհային տեղեկատու լաբորատորիային նոր իզոլատներ անհապաղ ուղարկելու համար՝ հետագա բնութագրման նպատակով:

6. Անդամները հանձնառում են Հանձնաժողովին տրամադրել ցանկացած տեղեկատվություն, որն անհրաժեշտ կլինի վերջինիս գործառույթներն իրականացնելու համար: Մասնավորապես անդամները պետք է անհապաղ զեկուցեն Հանձնաժողովին եւ ԿԱՀԿ-ին դաբաղ հիվանդության ցանկացած բռնկումների եւ ծավալի վերաբերյալ եւ պետք է կազմեն այդպիսի հետագա մանրակրկիտ զեկույցներ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ III

Նստավայրը

1. Հանձնաժողովի եւ Քարտուղարության նստավայրը գտնվում է Հռոմում՝ Կազմակերպության գլխամասում:

2. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են վերջինիս նստավայրում, եթե դրանք չեն հրավիրվում այլ վայրում Հանձնաժողովի՝ նախորդ նիստում ընդունված որոշման համաձայն, կամ բացառիկ հանգամանքներում՝ Գործադիր կոմիտեի որոշմանը համապատասխան:

ՀՈՂՎԱԾ IV

Ընդհանուր գործառույթները

1. Կազմակերպության գլխավոր տնօրենի միջոցով պայմանավորվածություններ ձեռք բերել ԿԱՀԿ-ի հետ՝ Կազմակերպության եւ ԿԱՀԿ-ի միջեւ ցանկացած համաձայնագրերի շրջանակում՝ ապահովելու համար, որ՝

1.1. բոլոր անդամներին տրամադրվի տեխնիկական խորհրդատվություն՝ դաբաղ հիվանդության վերահսկմանը վերաբերող ցանկացած խնդրի վերաբերյալ.

1.2. հիվանդության բռնկումների եւ վարակի բացահայտման վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը հավաքագրվի եւ տարածվի հնարավորինս արագ.

1.3. իրականացվի դաբաղ հիվանդության համար պահանջվող հատուկ հետազոտական աշխատանք:

2. Հավաքագրել տեղեկատվություն դաբաղ հիվանդության վերահսկման եւ հետազոտական ազգային ծրագրերի վերաբերյալ:

3. Համապատասխան անդամների հետ խորհրդակցությամբ սահմանել նման անդամներին անհրաժեշտ օգնության բնույթը եւ ծավալները՝ իրենց ազգային ծրագրերն իրականացնելու նպատակով:

4. Խրախուսել եւ ծրագրել համատեղ գործողություններ այն դեպքում, երբ դրանք անհրաժեշտ են կանխարգելման եւ վերահսկման ծրագրերի իրականացման համար, եւ այս նպատակով ձեռնարկել միջոցներ՝ պատշաճ ռեսուրսներ հասանելի դարձնելու համար, օրինակ՝ պատվաստանյութի մշակման եւ պահման համար՝ անդամների միջեւ համաձայնագրերի միջոցով, եւ նպաստել դաբաղ հիվանդության համաշխարհային վերահսկմանը:

5. Կազմակերպել պատշաճ հարմարություններ՝ վարակի տեսակավորման եւ բնութագրման նպատակով:

6. Ապահովել միջազգային լաբորատորիայի (Համաշխարհային տեղեկատու լաբորատորիա) հասանելիությունը՝ պատշաճ մեթոդներով վարակի արագ բնութագրման հնարավորություններով:

7. Պահպանել տեղեկություններ անդամ երկրներում եւ այլ երկրներում հակամարմինների եւ վարակի հասանելի պաշարների վերաբերյալ եւ իրավիճակը պահել շարունակական վերահսկողության ներքո:

8. Տրամադրել խորհրդատվություն մյուս կազմակերպություններին՝ հասանելի ցանկացած ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ՝ Եվրոպայում դաբաղ հիվանդության կանխարգելման եւ վերահսկման հարցում աջակցելու նպատակով:

9. Ձեռք բերել պայմանավորվածություն՝ Կազմակերպության գլխավոր տնօրենի միջոցով, այլ կազմակերպությունների, տարածաշրջանային խմբերի կամ Հանձնաժողովի անդամ չհամարվող երկրների հետ՝ Հանձնաժողովի կամ վերջինիս կոմիտեների աշխատանքում մասնակցելու կամ դաբաղ հիվանդության վերահսկման խնդիրների հարցում փոխօգնություն տրամադրելու համար: Այս պայմանավորվածությունները կարող են ընդգրկել համատեղ կոմիտեների ստեղծում կամ դրանցում մասնակցություն:

10. Քննարկել եւ հաստատել Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ Գործադիր կոմիտեի հաշվետվությունը՝ ներառելով նախորդ ֆինանսական ժամանակահատվածը, ինչպէս նաեւ հաջորդող երկու տարիների համար բյուջեն եւ ծրագիրը՝ Կազմակերպության Ֆինանսական կոմիտեին ներկայացնելու նպատակով:

ՀՈՂՎԱԾ V

Հատուկ գործառույթները

Հանձնաժողովի հատուկ գործառույթներն են՝

1. Աջակցել արտակարգ իրավիճակներում բռնկումների կանխարգելմանը եւ վերահսկմանը՝ Հանձնաժողովի եւ համապատասխան անդամի կամ անդամների կողմից պատշաճ համարվող ցանկացած եղանակով: Այս նպատակով Հանձնաժողովը կամ վերջինիս Գործադիր կոմիտեն, XI (5) հոդվածի դրույթներին համապատասխան, կարող է օգտագործել Վարչական բյուջեի ցանկացած այնպիսի չօգտագործված մնացորդ, որը նշված է XIII (7) հոդվածում, ինչպէս նաեւ այլ լրացուցիչ մասնաբաժիններ, որոնք կարող են տրամադրվել արտակարգ իրավիճակներում գործողությունների կատարման համար՝ XIII (4) հոդվածի համաձայն:

2. Ձեռնարկել համապատասխան գործողություններ հետեւյալ ոլորտներում.

2.1. Հակամարմինների եւ (կամ) պատվաստանյութի պահեստավորում Հանձնաժողովի կողմից կամ դրա անունից՝ ըստ անհրաժեշտության ցանկացած անդամի բաշխելու նպատակով:

2.2. Անդամի կամ անդամների կողմից անհրաժեշտության դեպքում «անվտանգության գոտիների» ստեղծման խթանում՝ հիվանդության տարածումը կանխելու նպատակով՝ ԿԱՀԿ-ի եւ ըստ կիրառելիության՝ Եվրոպական միության

հանձնարարականներին համապատասխան:

2.3. Արտակարգ իրավիճակներին տրվող արձագանքը կառավարելու համար պահանջվող անդամների անձնակազմի վերապատրաստում, ինչպես նաև վերապատրաստված անձնակազմի հաստիքների ստեղծում՝ մյուս անդամներին ըստ անհրաժեշտության աջակցելու նպատակով:

2.4. Կենսամեկուսացման համապատասխան չափանիշների պահպանում եւ խթանում եւ այս ուղղությամբ վերապատրաստում՝ անդամների կողմից դաբաղ հիվանդության վարակ պարունակող նյութերի կառավարման համար:

3. Իրականացնել հետագա հատուկ ծրագրեր, որոնք առաջարկվում են անդամների կամ Գործադիր կոմիտեի կողմից եւ հաստատվում Հանձնաժողովի կողմից՝ Հանձնաժողովի նպատակներն իրագործելու համար՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

4. Վարչական բյուջեի ավելցուկային ֆինանսական միջոցները կարող են օգտագործվել այս հոդվածի 2-րդ եւ 3-րդ պարբերությունների նպատակներով այն դեպքում, երբ նման գործողությունը հաստատվում է Հանձնաժողովի կողմից՝ քվեարկված ձայների երկու երրորդի մեծամասնությամբ, պայմանով, որ այս մեծամասնությունը գերազանցում է Հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին:

ՀՈՂՎԱԾ VI

Նիստերը

1. Յուրաքանչյուր անդամ Հանձնաժողովի նիստերին ներկայացվում է մեկ պատվիրակի միջոցով, որին կարող են ուղեկցել փոխարինողներ, փորձագետներ ու խորհրդատուներ: Փոխարինողները, փորձագետները եւ խորհրդատուները կարող են մասնակցել Հանձնաժողովի աշխատանքային հանդիպումներին, սակայն չքվեարկել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է այնպիսի փոխարինող, որը պատշաճ լիազորված է փոխարինելու պատվիրակին:

2. Յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնադրությամբ: Հանձնաժողովի նիստն իրավագոր է անդամների մեծամասնության դեպքում:

3. Հանձնաժողովը յուրաքանչյուր հերթական նիստի ավարտին ընտրում է նախագահ եւ երկու փոխնախագահներ եւ Գործադիր կոմիտեի անդամներ՝ պատվիրակների կազմից: Հանձնաժողովը նշանակում է նաեւ հատուկ կամ մշտական կոմիտեների անդամներին:

4. Հանձնաժողովի նախագահի հետ խորհրդակցությամբ Կազմակերպության գլխավոր տնօրենը հրավիրում է Հանձնաժողովի հերթական նիստ առնվազն երկու տարին մեկ անգամ: Հատուկ նիստեր կարող են հրավիրվել գլխավոր տնօրենի կողմից՝ Հանձնաժողովի նախագահի հետ խորհրդակցությամբ, կամ պահանջի դեպքում՝ Հանձնաժողովի կողմից հերթական նիստերի ընթացքում կամ անդամների առնվազն մեկ երրորդի կողմից հերթական նիստերի միջեւ ընկած ժամանակահատվածներում:

ՀՈՂՎԱԾ VII

Կոմիտեները

1. Հանձնաժողովը կարող է ստեղծել ժամանակավոր, հատուկ կամ մշտական կոմիտեներ՝ Հանձնաժողովի նպատակին վերաբերող հարցերն ուսումնասիրելու եւ զեկուցելու համար, եթե Հանձնաժողովի հաստատված բյուջեում առկա են անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

2. Այս կոմիտեների նիստերը հրավիրվում են Կազմակերպության գլխավոր տնօրենի կողմից՝ Հանձնաժողովի նախագահի եւ համապատասխան հատուկ կամ մշտական կոմիտեի նախագահի հետ խորհրդակցությամբ, այնպիսի ժամանակ եւ այնպիսի վայրում, որոնք համապատասխանում են դրանց հիմնադրման նպատակներին:

3. Նման կոմիտեներին անդամությունը կարող է բաց լինել Հանձնաժողովի բոլոր անդամների համար, կամ դրանք կարող են բաղկացած լինել Հանձնաժողովի ընտրված անդամներից կամ իրենց անունից հանդես եկող այն անհատներից, որոնց նշանակել են՝ տեխնիկական հարցերում նրանց մասնագիտական կարողությունները հաշվի առնելով, Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով: Նախագահի առաջարկով հատուկ եւ մշտական կոմիտեների հանդիպումներին մասնակցելու համար կարող են հրավիրվել դիտորդներ:

4. Կոմիտեների անդամները նշանակվում են Հանձնաժողովի հերթական նիստերին, եւ յուրաքանչյուր կոմիտե ընտրում է իր նախագահին:

ՀՈԴՎԱԾ VIII

Կանոնները եւ կանոնակարգերը

Սույն կանոնադրության դրույթներին համապատասխան՝ Հանձնաժողովը կարող է անդամների երկու երրորդի մեծամասնությամբ ընդունել եւ փոփոխել իր Գործունեության կարգը եւ Ֆինանսական կանոնակարգերը, որոնք պետք է համապատասխանեն Կազմակերպության Ընդհանուր կանոններին եւ Ֆինանսական կանոնակարգերին: Հանձնաժողովի Կարգը եւ դրանում կատարված ցանկացած փոփոխություն ուժի մեջ են մտնում կազմակերպության գլխավոր տնօրենի հավանությանն արժանանալուց հետո, իսկ Ֆինանսական կանոնակարգերը եւ դրանում կատարված փոփոխությունները ենթակա են հաստատման Կազմակերպության Խորհրդի կողմից:

ՀՈԴՎԱԾ IX

Դիտորդները

1. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ երկիր, որը Հանձնաժողովի անդամ չէ, կամ ցանկացած թեկնածու անդամ կարող է հրավիրվել կամ սեփական պահանջով դիտորդի կողմից ներկայացվել Հանձնաժողովի նիստերին: Այն կարող է ներկայացնել հուշագիր եւ մասնակցել քննարկումներին առանց ձայնի իրավունքի:

2. Այն պետությունները որոնք, դեռեւս ո՛չ Հանձնաժողովի անդամ են, ո՛չ էլ Կազմակերպության անդամ կամ թեկնածու անդամ, սակայն Միավորված ազգերի կազմակերպության, վերջինիս մասնագիտացված գործակալությունների կամ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անդամ են, կարող են պահանջի հիման վրա, ինչպես նաեւ Հանձնաժողովի նախագահի

համաձայնությամբ եւ Կազմակերպության Համաժողովի կողմից ընդունված՝ անդամ երկրներին դիտորդի կարգավիճակ շնորհելուն վերաբերող դրույթների համաձայն հրավիրվել՝ դիտորդի կարգավիճակով Հանձնաժողովի նիստերին մասնակցելու համար:

3. Հանձնաժողովի աշխատանքներում միջազգային կազմակերպությունների մասնակցությունը եւ Հանձնաժողովի ու նման կազմակերպությունների միջեւ հարաբերությունները կարգավորվում են Կանոնադրության համապատասխան դրույթներով եւ Կազմակերպության Ընդհանուր կանոններով, ինչպէս նաեւ միջազգային կազմակերպությունների հետ հարաբերություններին վերաբերող կանոններով, որոնք ընդունվում են Կազմակերպության Համաժողովի կամ Խորհրդի կողմից: Բոլոր նման հարաբերությունները կարգավորվում են Կազմակերպության գլխավոր տնօրենի կողմից: Կազմակերպության եւ ԿԱՀԿ-ի միջեւ հարաբերությունները կարգավորվում են Կազմակերպության եւ ԿԱՀԿ-ի միջեւ գործող համաձայնագրերով:

ՀՈԴՎԱԾ X

Գործադիր կոմիտեն

1. Ստեղծվում է Գործադիր կոմիտե, որը կազմված է նախագահից, Հանձնաժողովի երկու փոխնախագահներից եւ անդամների վեց պատվիրակներից՝ ընտրված Հանձնաժողովի կողմից վերջինիս հերթական նիստերի ավարտին: Պատշաճ ուշադրություն պետք է դարձնել՝ ապահովելու, որ անդամությունը Գործադիր կոմիտեում ունենա հավասար աշխարհագրական ներկայացվածություն: Հանձնաժողովի նախագահը եւ փոխնախագահները հանդես են գալիս որպէս Գործադիր կոմիտեի նախագահ եւ փոխնախագահներ:

2. Գործադիր կոմիտեի անդամները պաշտոնավորում են մինչև հաջորդ հերթական նիստի ավարտը՝ առանց վերընտրվելու իրավունքի սահմանափակման:

3. Եթե Գործադիր կոմիտեի պատվիրակն անխուսափելի պատճառներով տեւական ժամանակահատվածով դառնում է ոչ հասանելի, ապա այդ պատվիրակի կողմից ներկայացվող անդամից կարող է պահանջվել ժամկետի մնացած մասի համար նշանակել նոր պատվիրակ:

4. Գործադիր կոմիտեն հանդիպում է Հանձնաժողովի ցանկացած երկու հաջորդող հերթական նիստերի միջև ընկած ողջամիտ ժամանակահատվածում առնվազն երկու անգամ:

5. Հանձնաժողովի քարտուղարը կարող է հանդես գալ որպես Գործադիր կոմիտեի քարտուղար:

ՀՈԴՎԱԾ XI

Գործադիր կոմիտեի գործառույթները

Գործադիր կոմիտեն՝

1. Հանձնաժողովին ներկայացնում է առաջարկներ քաղաքականության հարցերի եւ գործողությունների ծրագրի վերաբերյալ:

2. Իրականացնում է Հանձնաժողովի կողմից հաստատված քաղաքականությունը եւ ծրագրերը:

3. Հանձնաժողովին է ներկայացնում ծրագրի նախագիծն ու վարչական բյուջեն եւ նախորդող երկու տարիների հաշվետվությունները:

4. Պատրաստում է զեկույց նախորդող երկու տարիների կտրվածքով Հանձնաժողովի գործողությունների վերաբերյալ՝ Հանձնաժողովի հաստատմանը

ներկայացնելու եւ Կազմակերպության գլխավոր տնօրենին փոխանցելու նպատակով:

5. Ստանձնում է Հանձնաժողովի կողմից իրեն պատվիրակված այլ նմանատիպ պարտականություններ, որոնցով մասնավորապես շոշափվում են V (1) հոդվածի շրջանակներում արտակարգ իրավիճակներում գործողությունները:

ՀՈԴՎԱԾ XII

Վարչակազմը

1. Հանձնաժողովի քարտուղարության անձնակազմը նշանակվում է գլխավոր տնօրենի կողմից՝ Գործադիր կոմիտեի հաստատմամբ, եւ ի կատարումն վարչական նպատակների՝ հաշվետու է գլխավոր տնօրենին: Նրանք նշանակվում են նույն ժամկետներում եւ պայմաններով, ինչ Կազմակերպության անձնակազմը:

2. Հանձնաժողովի ծախսերը վճարվում են վերջինիս վարչական բյուջեից՝ բացառությամբ անձնակազմին եւ օբյեկտներին վերաբերող այնպիսի ծախսերի, որոնք կարող է հոգալ Կազմակերպությունը: Կազմակերպության կրած ծախսերը որոշվում եւ վճարվում են գլխավոր տնօրենի կողմից կազմված եւ Կազմակերպության Համաժողովի կողմից հաստատված երկամյա բյուջեի շրջանակներում՝ համաձայն Կազմակերպության Ընդհանուր կանոնների եւ Ֆինանսական կանոնակարգերի:

3. Պատվիրակների, նրանց փոխարինողների, փորձագետների եւ խորհրդատուների կողմից Հանձնաժողովի ու դրա կոմիտեների նիստերին որպես կառավարության ներկայացուցիչներ մասնակցելիս կրած ծախսերը, ինչպես նաեւ նիստերին դիտորդների կրած ծախսերը հոգում են համապատասխան կառավարությունները կամ կազմակերպությունները:

Հանձնաժողովի կամ վերջինիս կոմիտեների հանդիպումներին մասնակցելու համար Հանձնաժողովի կողմից հրավիրված՝ սեփական անունից հանդես եկող փորձագետների ծախսերը ծածկվում են Հանձնաժողովի բյուջեի միջոցների հաշվին:

ՀՈԴՎԱԾ XIII

Ֆինանսավորումը

1. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հանձնառում է վարչական բյուջե վճարել իր տարեկան մասնաբաժինը՝ ըստ մասնաբաժինների սանդղակի: Այս մասնաբաժինների սանդղակը սահմանվում է Հանձնաժողովի կողմից իր անդամների երկու երրորդի մեծամասնությամբ՝ Հանձնաժողովի Ֆինանսական կանոնակարգերի համաձայն:

2. Հանձնաժողովի երկու հերթական նիստերի միջև ընկած ժամանակահատվածում անդամություն ձեռք բերած պետությունների մասնաբաժինները սահմանվում են Գործադիր կոմիտեի կողմից՝ Հանձնաժողովի Ֆինանսական կանոնակարգերի համաձայն. այս նպատակով կիրառվում են Ֆինանսական կանոնակարգերով սահմանված չափանիշները: Գործադիր կոմիտեի որոշումը ենթակա է հաստատման Հանձնաժողովի կողմից իր հաջորդ հերթական նիստում:

3. Վերոնշյալ 1-ին եւ 2-րդ պարբերություններով նախատեսված տարեկան մասնաբաժինները ենթակա են վճարման նախքան այն տարվա առաջին ամսվա ավարտը, որին դրանք վերաբերում են:

4. Անդամից կամ անդամներից կամ կազմակերպություններից կամ անհատներից կարող են ընդունվել լրացուցիչ մասնաբաժիններ՝ արտակարգ իրավիճակներում գործողությունների կատարման կամ հատուկ համակարգերի կիրարկման կամ այնպիսի վերահսկման միջոցների իրականացման համար,

որոնք կարող են ընդունվել կամ առաջարկվել Հանձնաժողովի կամ Գործադիր կոմիտեի կողմից՝ V հոդվածի համաձայն:

5. Անդամներից ստացված բոլոր մասնաբաժինները ենթակա են վճարման Հանձնաժողովի կողմից որոշված արժույթով՝ մասնաբաժին վճարող յուրաքանչյուր անդամի հետ համաձայնեցնելով:

6. Ստացված բոլոր մասնաբաժինները մուտքագրվում են Կազմակերպության գլխավոր տնօրենի կողմից ղեկավարվող Հավատարմագրային հիմնադրամ՝ Կազմակերպության Ֆինանսական կանոնակարգերին համապատասխան:

7. Յուրաքանչյուր ֆինանսական ժամանակահատվածի ավարտին վարչական բյուջեի ցանկացած չօգտագործված մնացորդ պահպանվում է Հավատարմագրային հիմնադրամում եւ հասանելի է դարձվում հաջորդ տարվա բյուջեի համար:

ՀՈՂՎԱԾ XIV

Փոփոխությունները

1. Սույն կանոնադրությունը կարող է փոփոխվել Հանձնաժողովի կողմից՝ Հանձնաժողովի անդամների ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

2. Կանոնադրության փոփոխությունների վերաբերյալ առաջարկները կարող են ներկայացվել Հանձնաժողովի ցանկացած անդամի կողմից ինչպես Հանձնաժողովի նախագահին, այնպես էլ Կազմակերպության գլխավոր տնօրենին ուղղված հաղորդման միջոցով: Գլխավոր տնօրենը փոփոխությունների վերաբերյալ բոլոր առաջարկների մասին անմիջապես տեղեկացնում է Հանձնաժողովի բոլոր անդամներին:

3. Կանոնադրության փոփոխությանը վերաբերող ոչ մի առաջարկ չի

ընդգրկվում որեւէ նիստի օրակարգում, եթէ այդ մասին Կազմակերպության գլխավոր տնօրենի կողմից ծանուցում չի ստացվել նիստի բացումից առնվազն 120 օր առաջ:

4. Փոփոխություններն ուժի մեջ են մտնում միայն Կազմակերպության Խորհրդի համաձայնությամբ:

5. Հանձնաժողովի անդամների համար լրացուցիչ պարտավորություններ չենթադրող փոփոխությունն ուժի մեջ է մտնում Խորհրդի որոշման ընդունման օրվանից:

6. Ցանկացած փոփոխություն, որը Հանձնաժողովի տեսանկյունից ներառում է լրացուցիչ պարտավորություններ Հանձնաժողովի անդամների համար, Խորհրդի կողմից հաստատվելուց հետո կատարման համար պարտադիր է փոփոխությունն ընդունած Հանձնաժողովի անդամների համար՝ սկսած Հանձնաժողովի անդամների երկու երրորդի կողմից ընդունվելու օրվանից, եւ այնուհետեւ Հանձնաժողովի մնացած յուրաքանչյուր անդամի դեպքում՝ գլխավոր տնօրենի կողմից տվյալ անդամի կողմից փոփոխությունն ընդունելու վերաբերյալ փաստաթուղթն ստանալու օրվանից:

7. Լրացուցիչ պարտավորություններ ներառող փոփոխությունների ընդունման վերաբերյալ փաստաթղթերն ի պահ են հանձնվում գլխավոր տնօրենին, որը տեղեկացնում է Հանձնաժողովի բոլոր անդամներին նման փաստաթղթերի ստացման մասին:

8. Հանձնաժողովի ցանկացած այն անդամի իրավունքներն ու պարտականությունները, որը չի ընդունել լրացուցիչ պարտավորություններ ներառող փոփոխությունը՝ փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվանից երկու տարին չգերազանցող ժամանակահատվածի ընթացքում, շարունակում է կանոնակարգվել Կանոնադրության այն դրույթներով, որոնք գործել են նախքան փոփոխության կատարումը: Վերոնշյալ ժամանակահատվածի ավարտից հետո Հանձնաժողովի՝ նման փոփոխությունը չընդունած ցանկացած նման անդամի համար կատարման համար պարտադիր է արդեն փոփոխված Կանոնադրությունը:

9. Գլխավոր տնօրենը տեղեկացնում է Հանձնաժողովի բոլոր անդամներին ցանկացած փոփոխության` ուժի մեջ մտնելու մասին:

ՀՈԴՎԱԾ XV

Ընդունումը

1. Սույն կանոնադրության ընդունումն իրականացվում է ընդունման փաստաթուղթը Կազմակերպության գլխավոր տնօրենին ի պահ հանձնելու միջոցով, եւ այն Կազմակերպության կամ ԿԱՀԿ-ի անդամների նկատմամբ սկսում է գործել գլխավոր տնօրենի կողմից նման փաստաթուղթն ստանալու պահից, որն անմիջապես այդ մասին տեղեկացնում է Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի:

2. I հոդվածի համաձայն` անդամության համար իրավասու, սակայն ո՛չ Կազմակերպության, ո՛չ էլ ԿԱՀԿ-ի անդամ համարվող պետությունների անդամությունն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Հանձնաժողովը հաստատում է անդամության հայտը` I հոդվածի դրույթներին համապատասխան: Գլխավոր տնօրենը Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի տեղեկացնում է ցանկացած հաստատված անդամության հայտի վերաբերյալ:

3. Կանոնադրությունը կարող է ընդունվել վերապահումներով: Կազմակերպության գլխավոր տնօրենն անմիջապես տեղեկացնում է Հանձնաժողովի բոլոր անդամներին ցանկացած անդամության հայտի կամ Կանոնադրության ցանկացած ընդունման փաստաթղթի ստացման վերաբերյալ, որոնք վերապահում են պարունակում: Վերապահումն ուժի մեջ է մտնում միայն Հանձնաժողովի անդամների կողմից միաձայն հաստատվելուց հետո: Այն դեպքում, երբ Հանձնաժողովի անդամները վերապահման մասին գլխավոր տնօրենի կողմից ծանուցվելու օրվանից երեք ամսվա ընթացքում պատասխան չեն տրամադրում, վերապահումը համարվում է ընդունված նրանց կողմից: Եթե վերապահումը միաձայն չի հաստատվում Հանձնաժողովի անդամների կողմից, ապա

վերապահումը կատարող երկիրը չի դառնում սույն կանոնադրության կողմ:

Հոդված XVI

Դուրս գալը

1. Ցանկացած անդամ կարող է իր ընդունումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մեկ տարին լրանալուց կամ Կանոնադրությունն ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած ժամանակ դուրս գալ Հանձնաժողովից՝ կախված այն հանգամանքից, թե որ ամսաթիվն է ավելի ուշ, դուրս գալու մասին գրավոր ծանուցելով Կազմակերպության գլխավոր տնօրենին, որն այդ մասին անմիջապես տեղեկացնում է Հանձնաժողովի բոլոր անդամներին: Դուրս գալն ուժի մեջ է մտնում դուրս գալու մասին ծանուցումն ստանալու օրվանից մեկ տարի հետո:

2. Երկու տարի անընդմեջ մասնաբաժին չվճարելը ենթադրում է վճարումը չկատարած անդամի դուրս եկած լինելը Հանձնաժողովի կազմից:

3. Եթե Հանձնաժողովի որեւէ անդամ դուրս է գալիս Կազմակերպությունից կամ ԿԱՀԿ-ից, որի հետեւանքով տվյալ երկիրը դադարում է լինել տվյալ երկու գործակալություններից որեւէ մեկի անդամ, ապա համարվում է, որ այն միաժամանակ դուրս է եկել նաեւ Հանձնաժողովից:

Հոդված XVII

Վեճերի լուծման կարգը

1. Սույն կանոնադրության մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ որեւէ վեճ առաջանալու դեպքում համապատասխան անդամը կամ անդամները կարող են դիմել Կազմակերպության գլխավոր տնօրենին կոմիտե նշանակելու պահանջով՝ վեճի առարկա հարցը քննելու համար:

2. Գլխավոր տնօրենն այնուհետեւ համապատասխան անդամների հետ խորհրդակցելուց հետո նշանակում է փորձագետների կոմիտե, որը ներառում է տվյալ անդամների ներկայացուցիչներին: Այս կոմիտեն քննարկում է վեճի առարկա հարցը՝ հաշվի առնելով համապատասխան անդամների կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերն ու ապացույցի մյուս ձեւերը: Այս կոմիտեն զեկույց է ներկայացնում Կազմակերպության գլխավոր տնօրենին, որը փոխանցում է այն համապատասխան անդամներին եւ Հանձնաժողովի մյուս անդամներին:

3. Հանձնաժողովի անդամները համաձայնում են, որ նման կոմիտեի առաջարկները թեպետ բնույթով պարտադիր չեն, այնուամենայնիվ, հիմք են ծառայում, որ համապատասխան անդամները կրկին քննարկեն այն խնդիրը, որից ծագել է անհամաձայնությունը:

4. Համապատասխան անդամները հավասարաչափ բաշխում են փորձագետների ծախսերը:

Հոդված XVIII

Գործողությունը դադարեցնելը

1. Սույն կանոնադրությունը դադարում է գործել Հանձնաժողովի որոշմամբ, որն ընդունվում է Հանձնաժողովի անդամների ձայների երեք քառորդի մեծամասնությամբ: Դրա գործողությունն ինքնաբերաբար դադարում է, եթե դուրս գալու հետեւանքով անդամների թիվը վեց երկրից պակաս է:

2. Կանոնադրության գործողությունը դադարելուց հետո Հանձնաժողովի բոլոր ակտիվներն իրացվում են Կազմակերպության գլխավոր տնօրենի կողմից, եւ բոլոր պարտավորությունների մարումից հետո մնացորդը համամասնորեն բաշխվում է անդամների միջեւ տվյալ պահի դրությամբ գործող մասնաբաժինների սանդղակին համապատասխան: Ակտիվներից իրավասու չեն բաժին ստանալ այն երկրները, որոնց մասնաբաժինները երկու հաջորդող տարիների ընթացքում վճարվել են ապառքի տեսքով, եւ ուստի համարվում է, որ դրանք դուրս են եկել XVI (2) հոդվածի համաձայն:

Հոդված XIX

Ուժի մեջ մտնելը

1. Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մտնում Կազմակերպության կամ ԿԱՀԿ-ի վեց անդամ երկրների՝ ընդունման մասին ծանուցումը Կազմակերպության գլխավոր տնօրենի կողմից ստանալու պահից՝ պայմանով, որ նրանց մասնաբաժինների հանրագումարը կազմում է XIII (1) հոդվածով նախատեսված վարչական բյուջեի ոչ պակաս, քան 30 տոկոսը:

2. Գլխավոր տնօրենը սույն կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրվա մասին տեղեկացնում է բոլոր այն երկրներին, որոնք ընդունման մասին ծանուցում են ներկայացրել:

3. Սույն կանոնադրության տեքստը՝ կազմված անգլերեն, ֆրանսերեն եւ իսպաներեն, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, հաստատվել է Կազմակերպության Համաժողովի կողմից 1953 թվականի դեկտեմբերի տասնմեկին:

4. Սույն կանոնադրության տեքստի երկու օրինակները հաստատվում են Համաժողովի նախագահի եւ Կազմակերպության գլխավոր տնօրենի կողմից, որոնցից մեկ օրինակն ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր տնօրենին, իսկ մյուսը հանձնվում է Կազմակերպության արխիվ: Տեքստի լրացուցիչ օրինակները հաստատվում են գլխավոր տնօրենի կողմից եւ տրամադրվում են Հանձնաժողովի բոլոր անդամներին՝ մատնանշելով Կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Կանոն I

Հանձնաժողովի նիստերը

Գլխավոր տնօրենի կողմից Հանձնաժողովի հերթական նիստ հրավիրելու մասին ծանուցումները նիստի բացման հաստատված օրվանից ոչ ուշ, քան 50 օր, իսկ հատուկ նիստ հրավիրելու մասին ծանուցումները՝ ոչ ուշ, քան 20 օր առաջ, ուղարկվում են Հանձնաժողովի անդամներին, Հանձնաժողովի անդամ չհամարվող երկրներին եւ այն միջազգային կազմակերպություններին (այսուհետ՝ մասնակից երկրներ եւ միջազգային կազմակերպություններ), որոնք կարող են ներկայացվել Կանոնադրության IX հոդվածի համաձայն:

Կանոն II

Օրակարգը

1. Հանձնաժողովի յուրաքանչյուր հերթական նիստի համար նախնական օրակարգը կազմվում է գլխավոր տնօրենի կողմից եւ ուղարկվում անդամներին ու մասնակից երկրներին, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններին՝ նիստի բացման հաստատված օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ:

2. Հերթական նիստի համար նախնական օրակարգը ներառում է՝

ա) բոլոր այն հարցերը, որոնք ընդգրկելու մասին որոշումները կայացվել են Հանձնաժողովի կողմից նախորդ նիստում,

բ) Հանձնաժողովի նախագահի եւ փոխնախագահի ընտրությունը (Կանոնադրության VI հոդված),

գ) Հանձնաժողովում անդամության հայտը՝ առկայության դեպքում (Կանոնադրության I հոդված),

դ) ծրագրի նախագիծը եւ վարչական բյուջեն (Կանոնադրության IV եւ XI հոդվածներ),

ե) Գործադիր կոմիտեի հաշվետվությունը Հանձնաժողովի՝ նախորդ երկու տարիների գործունեության վերաբերյալ (Կանոնադրության IV եւ XI հոդվածներ),

զ) այն կոմիտեների ներկայացրած հաշվետվությունները, որոնք ստեղծվել են Կանոնադրության VII հոդվածի համաձայն,

է) Գործադիր կոմիտեի ներկայացրած առաջարկները քաղաքականության հարցերի վերաբերյալ (Կանոնադրության XI հոդված),

ը) մասնաբաժինների սանդղակի ցանկացած փոփոխություն՝ ներառելով վերջին հերթական նիստից ի վեր անդամագրված յուրաքանչյուր պետության կողմից վճարած մասնաբաժինը որոշելու մասին հաստատումը (Կանոնադրության XIII հոդված),

թ) նախորդ ֆինանսական ժամանակահատվածում աուդիտի ենթարկված հաշիվները (Կանոնադրության IV եւ XI հոդվածներ),

ժ) Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները՝ առկայության դեպքում (Կանոնադրության XIV հոդված),

ժա) ցանկացած այնպիսի հարց, որն ընդգրկելու պահանջով դիմել են անդամները՝ II.5 կանոնի համաձայն,

ժբ) բոլոր այն հարցերը, որոնց մասով Համաժողովը, Խորհուրդը կամ Կազմակերպության գլխավոր տնօրենը դիմել են Հանձնաժողովին:

ժգ) Հանձնաժողովի գործառույթներից բխող այլ աշխատանքային հարցեր:

3. Հանձնաժողովի յուրաքանչյուր հատուկ նիստի համար նախնական օրակարգը կազմվում է գլխավոր տնօրենի կողմից եւ ուղարկվում անդամներին ու մասնակից երկրներին, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններին՝ նիստի բացման հաստատված օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ:

4. Հանձնաժողովի հատուկ նիստի համար նախնական օրակարգը ներառում է՝

ա) բոլոր այն հարցերը, որոնք հատուկ նիստի օրակարգում ընդգրկելու մասին որոշումները կայացվել են Հանձնաժողովի կողմից նախորդ նիստերի ընթացքում,

բ) Հանձնաժողովում անդամության հայտերը՝ առկայության դեպքում (Կանոնադրության I հոդված),

գ) Կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները՝ առկայության դեպքում (Կանոնադրության XIV հոդված),

դ) քննարկման համար առաջադրված ցանկացած հարց, որը հատուկ նիստ հրավիրելու նպատակով ներկայացվել է Հանձնաժողովի կամ անդամների մեկ երրորդի պահանջով:

5. Ցանկացած անդամ կարող է նիստի բացման հաստատված օրվանից ոչ

ուշ, քան 30 օր առաջ, դիմել գլխավոր տնօրենին օրակարգում հասուկ հարցեր ներառելու պահանջով: Այս հարցերն ընդգրկվում են լրացուցիչ ցանկում, որն ուղարկվում է անդամներին եւ մասնակից երկրներին, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններին՝ նիստի բացման հաստատված օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ:

6. Ցանկացած նիստում Հանձնաժողովը կարող է քվեարկված ձայների երկու երրորդի մեծամասնությամբ անդամի կողմից առաջարկված ցանկացած հարց ավելացնել օրակարգում:

7. Յուրաքանչյուր նիստում նախնական օրակարգը՝ առկայության դեպքում առաջարկված լրացումներով կամ ջնջումներով, նիստի բացումից հետո հնարավորինս շուտ ներկայացվում է Հանձնաժողովի հաստատմանը եւ Հանձնաժողովի կողմից փոփոխություններով կամ առանց դրանց հաստատվելուց հետո դառնում է նիստի օրակարգ:

8. Բոլոր հաշվետվությունների եւ այլ փաստաթղթերի օրինակները, որոնք ցանկացած նիստում պետք է օրակարգի որեւէ հարցի առնչությամբ ներկայացվեն Հանձնաժողովին, գլխավոր տնօրենի կողմից տրամադրվում են անդամներին եւ մասնակից երկրներին, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններին տվյալ հարցը ներկայացնելու հետ միաժամանակ կամ դրանից հետո հնարավորինս շուտ:

9. Հանձնաժողովի կողմից օրակարգում ներառված որեւէ հարցի քննարկմանն ընթացք չի տրվում, եթե 7-րդ կետում հիշատակված փաստաթղթերն անդամների պատվիրակություններին տրամադրելուց ի վեր չի անցել առնվազն 24 ժամ:

Կանոն III

Պատվիրակությունները եւ Հավատարմագրերը

1. Այս կանոնների նպատակներով, «պատվիրակ» հասկացությունը ենթադրում է այն անձը, որը նշանակվել է անդամի կողմից՝ Հանձնաժողովի նիստերին մասնակցելու համար, այսինքն՝ պատվիրակը եւ նրան փոխարինողը, ինչպես նաեւ փորձագետները եւ խորհրդատուները:

2. Պատվիրակների եւ փոխարինողների հավաստագրերը, ինչպես նաեւ նրանց պատվիրակությունների կազմում ընդգրկված այլ անձանց եւ մասնակից երկրների ու միջազգային կազմակերպությունների դիտորդների անունները, հնարավորության սահմաններում տրամադրվում են Հանձնաժողովի քարտուղարին ոչ ուշ, քան Հանձնաժողովի յուրաքանչյուր նիստի բացման օրը: Քարտուղարն ուսումնասիրում է հավատարմագրերը եւ դրանց վերաբերյալ զեկուցում է Հանձնաժողովին:

Կանոն IV

Քարտուղարությունը

Հանձնաժողովի քարտուղարության անձնակազմը նշանակվում է Կանոնադրության XII հոդվածի համաձայն եւ այդ հոդվածի դրույթների պահպանմամբ: Քարտուղարությունը պարտավոր է ձեռք բերել, Հանձնաժողովի աշխատանքային լեզուներով թարգմանել եւ շրջանառել փաստաթղթերը, զեկույցները եւ Հանձնաժողովի ու վերջինիս կոմիտեների բանաձեւերը, ինչպես նաեւ կազմել դրանց աշխատանքային հանդիպումների վերաբերյալ արձանագրություններ եւ իրականացնել այնպիսի այլ աշխատանքներ, որոնք կարող են պահանջվել Հանձնաժողովի կամ վերջինիս որեւէ կոմիտեի կողմից:

Կանոն V

Հանձնաժողովի լիազուստումը նիստերին մասնակցությունը

1. Հանձնաժողովի լիազուստումը կարող են մասնակցել բոլոր պատվիրակությունները եւ մասնակից երկրների ու միջազգային կազմակերպությունների ղիտորդները, ինչպես նաեւ Կազմակերպության աշխատակազմի այնպիսի անդամներ, որոնք նշանակվում են գլխավոր տնօրենի կողմից: Հանձնաժողովի լիազուստումը հրապարակային են, եթե այլ բան սահմանված չէ Հանձնաժողովի կողմից:

2. Հանձնաժողովի որոշմամբ քարտուղարը կարող է միջոցներ ձեռնարկել հանրության կամ լրատվության միջոցների ներկայացուցիչների եւ տեղեկատվական այլ գործակալությունների ներկայությունը Հանձնաժողովի լիազուստումը նիստերին ապահովելու համար:

Կանոն VI

Հանձնաժողովի նախագահի եւ փոխնախագահի լիազորությունները եւ պարտավորությունները

1. Ի հավելումն այս կանոնների որեւէ այլ նորմով իրեն վերապահված նման լիազորությունների՝ նախագահը հայտարարում է յուրաքանչյուր լիազուստումը նիստի բացման ու փակման մասին:

Նա վարում է լիազուստումը նիստերի քննարկումները եւ նման հանդիպումներին ապահովում է այս կանոնների պահպանումը, տալիս է ելույթ ունենալու, հարցեր առաջադրելու իրավունք, ինչպես նաեւ հրապարակում է որոշումներ: Նա որոշում է կայացնում հանդիպումների անցկացման կարգի մասին եւ այս կանոնների համաձայն՝ ցանկացած հանդիպման ընթացքի նկատմամբ իրականացնում է ամբողջական վերահսկողություն: Նա կարող է որեւէ հարցի քննարկման ընթացքում առաջարկ ներկայացնել Հանձնաժողովին՝ ելույթ ունեցողներին հատկացվող ժամանակի սահմանափակման, յուրաքանչյուր

պատվիրակության կողմից որեւէ հարցի վերաբերյալ ելույթների թվաքանակի, ելույթ ունեցողների ցանկի փակման, հանդիպման կասեցման կամ հետաձգման կամ էլ քննարկվող հարցի վերաբերյալ բանավեճի հետաձգման կամ փակման վերաբերյալ:

2. Լիագումար նիստի կամ դրա որեւէ մասի ընթացքում նախագահի բացակայության դեպքում նախագահում է փոխնախագահներից որեւէ մեկը: Որպես նախագահ հանդես եկող փոխնախագահն ունի նույն լիազորություններն ու պարտականությունները, ինչ նախագահը:

3. Նախագահը կամ որպես նախագահ հանդես եկող փոխնախագահը չի քվեարկում, սակայն իր պատվիրակության կազմից կարող է նշանակել փոխարինող կամ խորհրդատու՝ իր փոխարեն քվեարկելու համար:

4. Նախագահն իր գործառույթներն իրականացնելիս գործում է Հանձնաժողովի իրավասության շրջանակներում:

Կանոն VII

Գործադիր կոմիտեն

Կանոնադրության X հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովի նախագահը հանդես է գալիս որպես Գործադիր կոմիտեի նախագահ: Գործադիր կոմիտեի հանդիպումների առնչությամբ նա օժտված է նույն լիազորություններով ու պարտավորություններով, ինչ Հանձնաժողովի հանդիպումների առնչությամբ:

Գործադիր կոմիտեի որեւէ հանդիպման կամ դրա որեւէ մասի ընթացքում նախագահի բացակայության դեպքում նախագահում է Հանձնաժողովի փոխնախագահներից մեկը: Որպես նախագահ հանդես եկող փոխնախագահն օժտված է նույն լիազորություններով ու պարտականություններով, ինչ նախագահը: Նիստն իրավագոր է Կոմիտեի անդամների մեծամասնության դեպքում: Կոմիտեի որոշումներն ընդունվում են քվեարկվող ձայների մեծամասնությամբ: Կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

Կոմիտեի հանդիպումներն անցկացվում են դռնփակ, եթե այլ բան սահմանված չէ
Հանձնաժողովի կողմից:

Կանոն VIII

Առաջարկներն ու փոփոխությունները լիազումար նիստում

1. Լիազումար նիստում առաջարկներն ու փոփոխությունները ներկայացվում են գրավոր եւ հանձնվում են Հանձնաժողովի նախագահին, որը շրջանառում է օրինակները պատվիրակությունների շրջանում: Հանձնաժողովի կողմից հատուկ դեպքերում հակառակ որոշումն ընդունելու պարագայում, որեւէ լիազումար նիստում որեւէ առաջարկ չի քննարկվում կամ դրվում քվեարկության, եթե վերջինիս օրինակները չեն շրջանառվել բոլոր պատվիրակությունների շրջանում ոչ ուշ, քան հանդիպմանը նախորդող օրը: Հանձնաժողովի նախագահը, այնուամենայնիվ, կարող է թույլատրել փոփոխությունների կամ ընթացակարգերին վերաբերող միջնորդությունների քննարկումը եւ դիտարկումը, եթե անգամ այդ փոփոխություններն ու միջնորդությունները չեն շրջանառվել կամ շրջանառվել են միեւնույն օրը:

2. Առաջարկը կարող է հետ կանչվել դրա առաջարկողի կողմից նախքան դրա վերաբերյալ քվեարկություն սկսելը՝ պայմանով, որ առաջարկը չի փոփոխվել: Այս կերպ հետ կանչված առաջարկը կարող է նորից ներկայացվել ցանկացած անդամի կողմից:

Կանոն IX

Լիազումար նիստում աշխատանքների եւ քվեարկության անցկացման կարգավորումները

Աշխատանքների, քվեարկության անցկացման եւ հարակից այլ հարցերի վերաբերյալ կարգավորումները, որոնք Կանոնադրությամբ կամ այս կանոններով հատուկ նախատեսված չեն, սահմանվում են Կազմակերպության Ընդհանուր կանոններով:

Կանոն X

Հանձնաժողովի կոմիտեները

1. Ի հավելումն Կանոնադրության VII հոդվածով նախատեսված կոմիտեների՝ Հանձնաժողովը կարող է յուրաքանչյուր նիստում եւ վերջինիս տեւողության ժամանակահատվածում ստեղծել այնպիսի կոմիտեներ, որոնք անհրաժեշտ է համարում, եւ օրակարգի տարատեսակ հարցերը բաշխել այդ կոմիտեների միջեւ:

2. Յուրաքանչյուր նման կոմիտե ընտրում է նախագահ եւ փոխնախագահ:

3. Յուրաքանչյուր պատվիրակ իրավասու է հանդես գալ յուրաքանչյուր նման կոմիտեի կազմում, կամ նրան կարող է ներկայացնել իր պատվիրակության մեկ այլ անդամ, եւ հանդիպումներին նրան կարող են ուղեկցել իր պատվիրակության մեկ կամ ավելի անդամներ, որոնք կարող են ելույթ ունենալ, սակայն չեն կարող քվեարկել:

4. Յուրաքանչյուր կոմիտեի նախագահ իր կոմիտեի հանդիպումների առնչությամբ օժտված է նույն իրավունքներով ու պարտականություններով, ինչ Հանձնաժողովի նախագահը՝ լիազումար նիստի առնչությամբ: Նախագահի բացակայության դեպքում կոմիտեի փոխնախագահը նախագահում է նույն իրավունքների ու պարտականությունների ծավալով:

5. Կոմիտեում աշխատանքային հանդիպումները կանոնակարգում են X կանոնի դրույթներով այնքանով, որքանով դրանք կիրառելի են: Նիստն իրավագոր է կոմիտեի անդամների մեծամասնության դեպքում:

6. Հանձնաժողովի կողմից ստեղծված բոլոր կոմիտեներն իրենց եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում են Հանձնաժողովին:

Կանոն XI

Չեկուցողները

Նախորդող Կանոններից որեւէ մեկում վկայակոչված կոմիտեներից որեւէ մեկը պահանջի դեպքում կարող է իր նախագահի առաջարկով իր անդամների կազմից նշանակել մեկ կամ ավելի զեկուցողներ:

Կանոն XII

Մասնակից միջազգային կազմակերպությունները

Յուրաքանչյուր մասնակից երկիր կամ միջազգային կազմակերպություն, որը հրավիրվել է մասնակցելու Հանձնաժողովի նիստին, կարող է ներկայացվել դիտորդի կողմից: Նման դիտորդը կարող է առանց քվեարկելու ելույթ ունենալ եւ նախագահի պահանջով մասնակցել Հանձնաժողովի եւ կոմիտեների քննարկումներին: Նրանք կարող են Հանձնաժողովի կամ դրա կոմիտեների շրջանում առանց սահմանափակումների շրջանառել իրենց ներկայացրած երկրի կամ կազմակերպության տեսակետները:

Կանոն XIII

Հաշվետվությունները եւ առաջարկությունները

1. Հանձնաժողովի եւ դրա կոմիտեների աշխատանքային հանդիպումների ամփոփ արձանագրությունները շրջանառվում են համապատասխան հանդիպմանը մասնակցած պատվիրակության անդամների միջեւ հնարավորինս շուտ՝ հնարավորություն տալով նրանց առաջարկելու համապատասխան ուղղումների կատարում:

2. Յուրաքանչյուր նիստում Հանձնաժողովը հաստատում է այն զեկույցը, որն արտացոլում է իր տեսակետները, առաջարկները եւ որոշումները, այդ թվում՝ պահանջի դեպքում՝ փոքրամասնության տեսակետները:

3. Հանձնաժողովի եզրակացություններն ու առաջարկները յուրաքանչյուր նիստի ավարտին փոխանցվում են Կազմակերպության փոխտնօրենին, որը շրջանառում է դրանք Հանձնաժողովի այն անդամների, այն երկրների եւ միջազգային կազմակերպությունների շրջանում, որոնք ներկայացվել են նիստին եւ պահանջի դեպքում՝ Կազմակերպության մյուս անդամ երկրներին՝ ի գիտություն:

4. Կազմակերպության համար քաղաքականությանն առնչվող, ծրագրային կամ ֆինանսական բնույթի հետեւանքներ առաջացնող առաջարկները գլխավոր տնօրենի կողմից ներկայացվում են Համաժողովի կամ Խորհրդի ուշադրությանը՝ համապատասխան գործողություններ ձեռնարկելու համար:

5. Նախորդող պարբերության դրույթների համաձայն՝ Կազմակերպության գլխավոր տնօրենը կարող է դիմել Հանձնաժողովի անդամներին՝ Հանձնաժողովի առաջարկների հիման վրա ձեռնարկված գործողությունների վերաբերյալ Հանձնաժողովին տեղեկություններ տրամադրելու պահանջով:

Կանոն XIV

Պաշտոնյաների ընտրությունը

1. Յուրաքանչյուր հերթական նիստում նախագահը կարող է տեղից թեկնածուներ առաջադրել Հանձնաժողովի նախագահի եւ երկու փոխնախագահների պաշտոնների համար՝ հետագա պաշտոնավարման ժամկետով՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով:

2. Յուրաքանչյուր թեկնածություն պետք է առաջադրվի նախաձեռնողի կողմից, ստանա աջակցություն ու հաստատվի առաջադրված թեկնածուի կողմից:

Կանոն XV

Լեզուները

Հանձնաժողովի աշխատանքային լեզուներն են անգլերենն ու ֆրանսերենը:

Կանոն XVI

Կանոնների կասեցումը եւ փոփոխությունը

1. Կանոնադրության դրույթների համաձայն՝ վերոշարադրյալ Կանոններից յուրաքանչյուրը կարող է կասեցվել քվեարկվող ձայների երկու երրորդի մեծամասնությամբ Հանձնաժողովի ցանկացած լիազումար նիստում՝ պայմանով, որ կասեցումն առաջարկելու մտադրության վերաբերյալ ծանուցումն ուղարկվի պատվիրակներին այն հանդիպումից ոչ պակաս, քան 24 ժամ առաջ, որի ընթացքում պետք է ներկայացվի առաջարկը:

2. Կանոնադրության դրույթների համաձայն՝ այս կանոններում կատարված փոփոխությունները կամ լրացումները կարող են ընդունվել Հանձնաժողովի ցանկացած լիազումար նիստում՝ պայմանով, որ փոփոխությունը կամ լրացումն առաջարկելու մտադրությունը ծանուցվի պատվիրակներին այն հանդիպումից ոչ պակաս, քան 24 ժամ առաջ, որի ընթացքում պետք է քննարկվի առաջարկը, ինչպես նաեւ այն պայմանով, որ Հանձնաժողովն ստացած եւ

դիտարկած լինի համապատասխան կոմիտեի կողմից առաջադրված զեկույցը:

3. Գործադիր կոմիտեն կարող է առաջարկել փոփոխություններ եւ լրացումներ կատարել այս կանոններում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԸ

Կանոնակարգ I

Կիրառելիությունը

1.1. Դաբաղ հիվանդության վերահսկումների մասին եվրոպական հանձնաժողովի ֆինանսական վարչարարությունը կարգավորվում է այս կանոնակարգերով:

ՊԳԿ-ի ֆինանսական կանոններն ու ընթացակարգերը տարածվում են Հանձնաժողովի գործունեության վրա, եթե այլ բան նախատեսված չէ:

Կանոնակարգ II

Ֆինանսական ժամանակահատվածը

2.1. Ֆինանսական ժամանակահատվածը երկու օրացուցային տարի է եւ համընկնում է ՊԳԿ-ի ֆինանսական ժամանակահատվածի հետ:

Կանոնակարգ III

Բյուջեն

3.1. Բյուջեի նախահաշիվներն ընդգրկում են այն ֆինանսական ժամանակահատվածի եկամուտն ու ծախսերը, որոնց վերաբերյալ դրանք կազմվել են՝ արտահայտված ԱՄՆ դոլարով:

3.1. Բյուջեի նախահաշիվը ներառում է տվյալ ֆինանսական ժամանակահատվածի համար աշխատանքային ծրագիրը, ինչպես նաև այնպիսի տեղեկատվություն, հավելվածներ կամ բացատրական հաշվետվություններ, որոնք կարող են պահանջվել Գործադիր կոմիտեի կամ Հանձնաժողովի անունից:

3.3. Բյուջեն բաղկացած է՝

ա) Հանձնաժողովի անդամների կողմից Կանոնադրության XIII հոդվածի համաձայն վճարվող՝ հերթական մասնաբաժիններին վերաբերող վարչական բյուջեից եւ IV, V եւ XII(2) հոդվածներից բխող ծախսերից,

բ) այն միջոցներին վերաբերող հատուկ բյուջեից, որոնք տվյալ ֆինանսական ժամանակահատվածում հատկացվում են XIII(4) հոդվածի համաձայն վճարվող լրացուցիչ մասնաբաժիններից՝ V հոդվածում թվարկված ծախսերի համար:

3.4. Ֆինանսական ժամանակահատվածի համար վարչական բյուջեն բաղկացած է հետևյալ պահուստային միջոցներից.

- վարչական ծախսեր՝ ըստ IV եւ XII(2) հոդվածների,
- ծախսեր՝ V հոդվածում թվարկված գործողությունների մասով: Այս գլխի ներքո ներկայացված նախահաշիվներն անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացվել միայն մեկ հանրագումարով, սակայն յուրաքանչյուր առանձին նախագծի համար պատրաստվում եւ հաստատվում են մանրամասն նախահաշիվներ՝ որպես վարչական բյուջեի «հավելյալ մանրամասներ»,
- չնախատեսված ծախսերի համար միջոցներ:

3.5. Վարչական բյուջեն պատրաստվում է Գործադիր կոմիտեի կողմից եւ ներկայացվում Հանձնաժողովին:

3.6. Առանձին դեպքերում Հանձնաժողովի կամ Գործադիր կոմիտեի կողմից պատշաճ ժամկետում պատրաստվում են հատուկ բյուջեներ (3.3(բ)):

3.7. Հանձնաժողովի վարչական բյուջեն ներկայացվում է Կազմակերպության Ֆինանսական կոմիտեին:

Կանոնակարգ IV

Հատկացումները

4.1. Բյուջեների հաստատումից հետո դրանցում ներառված հատկացումների մասով Կազմակերպությունը կրում է համապատասխան պարտավորություններ եւ կատարում է վճարումներ՝ ուղղված այն նպատակների իրականացմանը, որոնց առնչությամբ հատկացումները դրվել են քվեարկության, եւ այն չափերով, որոնց համար քվեարկել են:

4.2. Արտակարգ իրավիճակների դեպքում գլխավոր տնօրենն իրավասու է ստանալ հավելյալ մասնաբաժիններ անդամից կամ Հանձնաժողովի անդամից կամ դրամաշնորհներ՝ այլ աղբյուրներից, եւ դրանց հաշվին կրել ծախսեր արտակարգ իրավիճակներում այնպիսի գործողությունների համար, որոնց համար հատկապես տրամադրվել են նշված մասնաբաժինները կամ դրամաշնորհները: Այս առնչությամբ կատարված այդպիսի մասնաբաժինները կամ դրամաշնորհներն ու ծախսերը մանրամասն զեկուցվում են Գործադիր կոմիտեի կամ Հանձնաժողովի հաջորդ նիստի ընթացքում:

4.3. Ֆինանսական ժամանակահատվածի ավարտին նախորդ տարվա ցանկացած չմարված պարտավորություն չեղարկվում է, կամ եթե պարտավորությունը շարունակում է ենթակա լինել վճարման, այն պահպանվում է հետագա վճարման համար:

4.4. 3.5 կանոնակարգի համաձայն պահուստային միջոցների միջև կատարված փոխանցումներն իրականացվում են Կազմակերպության կողմից Գործադիր կոմիտեի քարտուղարի առաջարկով: Այս կարգով կատարված փոխանցումների մանրամասները զեկուցվում են Գործադիր կոմիտեին:

Կանոնակարգ V

Դրամական միջոցների տրամադրումը

5.1. Վարչական բյուջեի հատկացումները ֆինանսավորվում են անդամ երկրների կառավարությունների մասնաբաժինների հաշվին, որոնք սահմանվում են վճարվում են Կանոնադրության XIII հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունների համաձայն:

5.1.1. Տարեկան մասնաբաժիններ ստանալու ընթացքում Կազմակերպությունն իրավասու է ֆինանսավորել բյուջետային ծախսերը վարչական բյուջեի չօգտագործված մնացորդի հաշվին:

5.2. Յուրաքանչյուր անդամի տարեկան մասնաբաժինները սահմանելու նպատակով համապատասխան ֆինանսական ժամանակահատվածի համար այդպիսի անդամի մասով գնահատումը կատարվում է երկու հավասար փոխանցումներով, որոնցից մեկը վճարվում է առաջին օրացուցային տարում, մյուսը՝ ֆինանսական ժամանակահատվածի երկրորդ օրացուցային տարում:

5.3. Յուրաքանչյուր օրացուցային տարվա սկզբում գլխավոր տնօրենը տեղեկացնում է անդամ երկրների կառավարություններին նրանց՝ տարեկան մասնաբաժինները բյուջե վճարելու պարտավորության մասին:

5.4. Մասնաբաժինները ենթակա են ամբողջական վճարման՝ վերոնշյալ 5.3 կանոնակարգում վկայակոչված գլխավոր տնօրենի հաղորդումն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, կամ այն օրացուցային տարվա առաջին օրվա դրությամբ, որին վերաբերում են՝ կախված այն հանգամանքից՝ որ ամսաթիվն է ավելի ուշ: Հաջորդ օրացուցային տարվա հունվարի 1-ից այդպիսի մասնաբաժինների

չօգտագործված մնացորդները համարվում են ապառք՝ մեկ տարվա կտրվածքով:

5.5. Վարչական բյուջե վճարվող տարեկան մասնաբաժինները գնահատվում են ԱՄՆ դոլարով եւ հաշվարկվում են յուրաքանչյուր պետության ազգային եկամտի հիման վրա՝ ՊԳԿ-ին հատկացվող մասնաբաժինների սանդղակում, ներկայացված կարգով եւ ըստ կենդանիների գլխաքանակի: Մասնաբաժինների վճարման արժույթը սահմանվում է Հանձնաժողովի կողմից՝ Կանոնադրության XIII(5) հոդվածի համաձայն:

5.6. Անդամություն ձեռք բերող ցանկացած պետություն մասնաբաժին է վճարում բյուջե՝ XIII(2) հոդվածի դրույթների համաձայն այն ֆինանսական ժամանակահատվածի համար, որի ընթացքում գործում է անդամությունը, եւ այդպիսի մասնաբաժնի վճարման սկիզբ է համարվում այն եռամսյակի մեկնարկը, որի ընթացքում ձեռք է բերվել անդամությունը:

Կանոնակարգ VI

Դրամական միջոցները

6.1. Բոլոր մասնաբաժինները, լրացուցիչ մասնաբաժինները եւ մյուս մուտքերը տեղակայվում են Հավատարմագրային հիմնադրամում, որը կառավարվում է ՊԳԿ-ի կողմից:

6.2. 6.1 կանոնակարգում հիշատակված Հավատարմագրային հիմնադրամի առնչությամբ Կազմակերպությունը վարում է հաշիվներ.

6.2.1. Ընդհանուր հաշիվ, որին հաշվեգրվում են բոլոր մասնաբաժինների մուտքերը՝ վճարված Կանոնադրության XIII(1) եւ (2) հոդվածի համաձայն, եւ հավելյալ մասնաբաժինների մուտքերը՝ վճարված XIII(4) հոդվածի համաձայն, եւ որից պետք է վճարվեն տարեկան վարչական բյուջեի հաշվին իրականացվող բոլոր ծախսերը:

6.2.2. Այնպիսի անհրաժեշտ լրացուցիչ հաշիվներ, որոնց հաշվեգրվում են լրացուցիչ մասնաբաժինները եւ դրանց առնչվող ծախսերը՝ XIII(4) հոդվածով

նախատեսված կարգով:

Կանոնակարգ VII

7.1. Կանոնադրության XII.3 հոդվածի համաձայն ճանապարհային ծախսերը Հանձնաժողովի կողմից կրելու դեպքում Հանձնաժողովի կամ դրա կոմիտեների հանդիպումներին իրենց անունից մասնակցության հիմունքներով Հանձնաժողովի կողմից հրավիրված փորձագետները կարող են ձեռք բերել տոմսը կա՛մ Հանձնաժողովից, կա՛մ անմիջականորեն գնել այն:

Վերջին դեպքում փորձագետին փոխհատուցվում է այն գումարը չգերազանցող իրական ծախսը, որը Հանձնաժողովը կվճարեր նրա կողմից տոմսը գնելու դեպքում: Սա կիրառվում է նաև բոլոր այն ճանապարհորդությունների դեպքում, որոնց համար Հանձնաժողովը հանձնատել է վճարում կատարել:


7.2. Հանձնաժողովի պարտավորությունն այնքանով, որքանով շոշափվում են տրանսպորտային ծախսերը, սահմանափակվում է այն գումարով, որը ենթակա է փոխհատուցման ՊԳԿ-ի կանոնների եւ կանոնակարգերի համաձայն. ներկայումս դա էկոնոմ դասի նվազագույն ծախսատար դրույքաչափն է, որը ներառում է անվերադարձելի տոմսեր մինչև 9 ժամ տեւողությամբ թռիչքների համար, իսկ բիզնես դասի դեպքում՝ անվերադարձելի տոմսեր 9 ժամից ավելի տեւողության թռիչքների համար:

Կանոնակարգ VIII

